

**ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ ՀՈՒՆԱՆ ՊՈՂՈՍՅԱՆԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ  
ՈՒՂԵՐԶԸ 2018-2019 ՈՒՍՏԱՐՎԱ ՎԵՐՋԻՆ ԶԱՆԳԻ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ  
24.05.2019**



**Միրելի՛ շրջանավարտներ, մանկավարժներ, ծնողներ**

Ամեն օր դպրոցում հնչող սովորական զանգն այսօր ձեզ համար դողանջում է այլ կերպ ու հուզիչ՝ անվանվելով «Վերջին զանգ»...

Շնորհավորում եմ բոլորիս կյանքում միշտ հիշվող ու կարևոր այս տոնական օրվա կապակցությամբ:

Դպրոցում՝ վերջին, բայց ապագայի նոր հորիզոններ բացող առաջին զանգն է այն, որը սկիզբ է դնում ծրագրածն իրականացնելու, երազանքները կյանքի կոչելու, նպատակներին հասնելու ամենօրյա պայքարին:

Հրաժեշտը դպրոցին ինքնուրույն հասուն ճանապարհի մեկնարկն է, որն սկսում էք հարազատ կրթօջախում ստացած հմտություններով, դասագրքերից և դրանցից դուրս սերտած շատ այլ գիտելիքներով՝ մարդկային հարաբերությունների, չարի և բարու, քաղաքացու՝ ձեր պարտականությունների մասին:

Եվ օրվա առիթով հիշելով ուսումնառության ընթացքի հաջողություններն ու բացթողումները՝ միշտ հիշեք նրանց, ովքեր ներդրել են իրենց սերն ու ջերմությունը, բոլոր ուժերն ու հոգին՝ ձեզ լավագույնս կրթելու՝ նպատակով, ովքեր անզամ դպրոցն ավարտելուց հետո անհանգստանալու են ձեզ համար, տխրելու՝ ձախողումների, հպարտանալու ձեր հաջողությունների դեպքում՝ ձեր ուսուցիչներին, որոնց, տոնի կապակցությամբ, նաև իմ շնորհակալությունն եմ հայտնում անզնահատելի աշխատանքի համար:

Միրելի՛ շրջանավարտներ, առջևում քննությունների, մասնագիտության ու հետագա անելիքների ընտրության, ինքնադրսևորման ու նոր հեռանկարում կողմնորոշվելու բարդ շրջանն է: Վստահորեն՝ ն քայլեք կյանքի ճանապարհով՝ հավատալով ձեր ուժերին:

Իսկ մենք ձեր հաջողություններին, ձեռքբերումներին, անկախ ընտրած ոլորտից՝ լավ մասնագետ դառնալուն հետևելու ենք երկրի վաղվա օրը ապահով ձեռքբերում տեսնելու մտահոգությամբ:

Թո՛ղ բարի լինեն ձեր մտքերը, թևեր ունենան ձեր երազանքները, լուսավոր լինի սպասվող ուղին:

**Բարի՛ երթ, սիրելի՛ շրջանավարտներ:**